

որ պատերազմական գործի սահմանում նպաստե՞րու ընդհանուր հարկահաւաւաւ Գալիան Ծանալըրիմէ ստացանք վերջին նոյեմբեր ամսի համար հինգհարիւր Քրանկ ոսկի, զոր մեր յոյժ սիրեցեալ եղբայրակից եւ պերճաւոր բազաւորը պատուիրեց մեզ ամէն ամիս ստանալ իրմէ, որչափ ժամանակ որ հաճոյ բուի իրեն, սկսելով վերջին Ամենայն Օրոց տօնի օրէն, ինչպէս կը տեսնուի մեր յիշեալ եղբայրակցին եւ պերճաւոր բազաւորին կողմէ այս մասին տուած հրամանագրէն, որ գրուած է Պարիսի մէջ, 1384 ղեկեմբեր 7-ին: Ենչն ամուտան համար տուած վերոյիշեալ հինգհարիւր Քրանկ ոսկի գումարէն գտն եմք եւ ամբողջութեամբ ստացած. իսկ յիշեալ ընդհանուր հարկահաւաւան ու միւս բոլոր անձերն որոնց անդորրագիր տալ պէտք էր՝ պատե՛հ ազատ կը կացուցանենք: Ի վկայութիւն ասոր՝ ներկայ անդորրագրին վրայ մեր կնիքը ղեկ տուինք: Տուեալ ի Պարիս, Պրոք օրն ղեկեմբերի, շնորհաց բուին հազար երեքհարիւր ութսունչորս:

Թագաւորին կողմէ՝

(Կ Ն Ի Ք)

4. ՖԲԱՆՍԻՍՍԻ

Սէն՝տ-Ուէէնի պալատին մէջ Լեւոնի ընտելութիւնն հաստատելն ու Կալուրոս Զ-ի կողմէ Հայոց թագաւորին հանգէպ ցոյց արուած առատաձեռնութիւնը՝ մինչեւ իսկ մեր ժամանակակից պատմիչներու նախահնչը զրգոտմեն. ինչպէս Սէն՝տ-Ուէէնի պալատին պատմիչը՝ Լ. Պաննիէ, Լեւոնի Պարիս գալը շատ կը տեսնէ եւ անոր համար եղած ծախսերը՝ Գանձատան վնաս կը համարէ(1): Խոստովանելով հանդերձ՝ թէ Լեւոն Եւրոպայի մէջ արքունեաց զոններն ափ առած զրամ կը հաւաքէր եւ, ինչպէս պիտի տեսնենք, առանց խղճի խայթ ունենալով՝ իր հաճոյքներուն կը ծախսէր զանոնք, սակայն պէտք է նաեւ յայտարարել որ Լեւոնի Պարիս գալն իր օգուտներն ունեցած է Ֆրանսայի համար. որովհետեւ Լեւոն ոչ թէ միայն իր զիրքին արժանի պատիւներով կը հիւրասիրուէր Ֆրանսայի թագաւորէն, այլ նաեւ՝ իբրեւ խորհրդական՝ կը մասնակցէր արքունի ժողովներու եւ պաշտօնական հանգէպներու: Այս ժողովներէ մէկին մէջ էր որ Լեւոն ճառ մը խօսելով հաշատութիւն կը քարոզէր Ֆրանսայի եւ Անգլիայի միջեւ, յօժարութիւն յայտնելով ստանձնելու միջնորդի դերը՝ անվերջ ու արիւնահեղ պատերազմը զաղբեցնելու նպատակով:

Ֆրանսայի եւ Անգլիայի միջեւ 1384 թ. յունվար 26-ին կնքուած նոր ղրնադադարի պայմանաժամը լրանալու մօտ էր: Մտքերն սկսած էին զրաղել պատերազմով: 1385-ի գարնան Կարոլոս Զ-ի պալատին մէջ ժողով

(1) L. Pannier, *La Noble-Maison de Saint-Ouen*. եր. 158-9.